



Ծանուցման անդ
Առաջին երես 5

ՀԱՆՈՒՅՍ ԱԶԳԱՅԻՆ

Gérant responsable
A. SAKAÏAN

ԾԱՂԻԿ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի Չորեքշաբ-
թի եւ Շաբաթ օրերը :
Տարեկան բաժանորդագրութեան գինն է 400 դրուշ արծաթ,
— Վեցամսեայն 50. — Կաշտուաց համար 445 դրշ : Վեցամսեայ 60

Որ եւ էնամակ կամ գրութիւն պէտք է ուղղել
Աւ Արտանաւեր եւ Տնօրէն Անտոն Սաքաեան,
Կ. Պոլիս, Պապը Այն Տառտէսի թիւ 20:
Խմբագրութեան յանձնուած գրութիւնք ետ չեն արուիր :

Թիի 42 Ա. ՏԱՐԻ

Գիւ 40 ՓԱՐԱ

1887 ՄԱՅԻՍ 16 ՇԱԲԱԹ

ՀԱՐԱՐԶՄԱՆ ՏՕՆԸ

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը
հինգշաբթի առաւօտ Ս. Պատարագ
մատոյց Ազգային հիւանդանոցի
մատարան մէջ և իմաստալից քարոզ
մը խօսեցաւ : Մեծանուն Պէդճեան
Ամիրայէն սկսեալ բոլոր ազգային
բարերարաց մեծագործութիւնները
դրուատեց : Հիւանդանոցի վերաշի-
նութեան ձեռնարկին սկզբնաւո-
րութիւնն աւետեց և բոլոր ժողո-
վրդեան հրաւէր կարգաց որ այրն
իւր ունեցածէն, կիներն իւր ազա-
մանդէն մաս մը սոյն շինութեան
յատկացնէ :

Յետ աւարտման եկեղեցւոյ Ն.
Սրբազնութիւնը Կիւլպէնկեան Սէ-
րովբէ էֆէնտիի գերեզմանին վրայ
Հոգեհանգիստ կարգաց և ուղղակի
Հիւանդարանն այցելելով զգեստա-
ւորեալ, օրհնեց և մխիթարեց բոլոր
հիւանդները :

Ժամը 5 ու կէսին փառաւոր սե-
ղան մը արուեցաւ Հիւանդանոցի վե-
րի սրահին մէջ որում նախագահեց
Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իւր
չուրջն ունենալով 15էն աւելի եկե-
ղեցականներ, վարդապետ, քահա-

նայ, Հոգաբարձութեան անդամք՝ Յա-
կոբեան, Կիւլպէնկեան, Կիւմիւշկէճը-
տան և Ֆէնէրճան էֆէնտիք Ն. Սըր-
բազնութեան դէմը նըստած էին, մի
քանի երեւելիներ ունենալով իրենց
մօտ :

Ամեն Ս. Պատրիարք Հայրը առա-
ջին բաժակն առաջարկեց Օսմանեան
Վեհապետ Օչոստափառ Սուլթան
Ապտիւլ Համիտ խանի թանկագին
կենաց Ոյր շնորհիւ կապրի Հայոց
ազգը և կը վայելէ իւր ներքին գոր-
ծոց աղատութիւնը : Հանդիսականք
բուռն ծափահարութեամբք ընդու-
նեցան սոյն բաժակը :

Ն. Սրբազնութիւնը երկրորդ բա-
ժակն առաջարկեց Ազնուաշուք Հո-
գաբարձութեան պատուական ան-
դամոց կենաց ոյր շնորհիւ և միջո-
ցաւ կը վայելէ սոյն հաստատութիւնը
Ազգին խնամքը և բարեկեցիկ վիճակ
մը ստացած է : Հանդիսականք ծա-
փահարութեամբք ընդունեցին սոյն
բաժակը :

Հոգաբարձութեան Ատենապետ
Ազնուաշուք Միքայէլ էֆէնտի Յա-
կոբեան առաջարկեց երրորդ բաժա-
կը Ամեն. Ս. Պատրիարք Հօր կենացը
որ իբրեւ արժաննտի Հայր և պաշտ-
պան որբոց կը հսկէ սոյն հաստա-

տութեան և կը դիւրացնէ ամեն
ձեռնարկ յօգուտ Հիւանդանոցի :

Տիգրան էֆէնտի Նուսուֆեան հե-
տեւեալ բաժակը առաջարկեց :

«Յա՛ ուն այն հանդիսականաց, որք
ինձ նման իրենց պարտականութիւն
համարած են ամեն տարի սոյն նուի-
րական հանդիսին մասնակցիլ և ե-
րախտագիտութիւն յայտնել Հիւան-
դանոցիս Հոգաբարձութեան պատ-
ուարժան անդամոց մերովսանն քա-
ջալերելու համար իրենց մատուցած
անձանձիր աշխատութիւնն, սիրով
յանձն կ'առնում առաջարկել բաժակ
մ'ի յիշատակ Մեծանուն հիմնադրին՝
Պէդճեան Յարութիւն Ամիրայի :

Սոյն երախտագիտական բաժակին
պէտք է կցել անշուշտ նաեւ այն
ամենայն անձինք, որք թէ՛ հիմնադ-
րին կենդանութեան և թէ՛ յետ իւր
վախճանման նպատակով են այս հար-
կին յարատեւութեանը : Տատեան և
Պալեան դերդաստաններն թ մասնա-
ւորի կը յիշատակուին Հիւանդանո-
ցիս տարեգրութեան մէջ : Սոյն աղի-
օգուտ հաստատութեան բարգաւաճ-
ման մատուցած օժանդակութեանը
համար, կըսենք ուրեմն «Յիշատակ
իւրեանց օրհնութեամբ եղեցին» :

«Յետ բոլոր այն անձանց որք իրենց նուիրականութեամբ և վաստակօք բարերար են հանդիսացած, չեմք մոռնար նաեւ յիշատակել Սպարթալեան էֆէնտին, որ սոյն յարկին հաստատութեան թուականէն կէս դար ետքը առաջին հետեւողն եղաւ բարեյիշատակ Պէդճեանի՝ հիմնելով Զմեռնիոյ Աղգային Հիւանդանոցը, Ապրի ուրեմն» :

Հուսկ ապա Հայրենիքի տնօրէն Մ. Մելիքեան էֆէնտի դրուատեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Վարչութեան և մեղուջան Խնամակալութեան բարիքներն առ Աղգն և առ Հիւանդանոցն և յարեց թէ ուրիշ տարիներ այս սեղանին վրայ Հիւանդանոցի վերալինութեան համար բարեմաղթութիւններ կընէր. իսկ այս տարի կուգայ աւետել թէ վերալինութեան գործն վերջնապէս որոշուած է և ի մտոյ պիտի ձեռնարկուի շինութեան, որով պիտի պսակուին Աղգին իղձերն և Խնամակալութեան գովչի ջանքերն : Ի վերջոյ մաղթեց որ Տ. Յարութիւն Պատրիարքի, ներկայ վարչութեան և խնամակալութեան օրով սկսի և աւարտի շինութիւնն ի պատիւ իրենց և յօգուտ Աղգին :

Սեղանն աւարտելէ մէկ ժամ վերջը Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շրջապատեալ եկեղեցական հայրերէ և Հոգաբարձութեան անդամներէ, Որբանոցն այցելեց, ուր աշակերտք երգելով դիմաւորեցին և երկու Հայրերէն և մէկ Տաճկերէն ատենաբանութիւններ արտասանեցին :

Ս. Պատրիարք Հայրը խորապէս յուզեալ սոյն ատենաբանութիւններէն, աշակերտաց մօտեցաւ, և մի քանի խորհրդաւոր խօսքեր ուղղեց : «Ինչք որք չէք, այլ Աղգին դաւակնէրն էք : Ուրիշնք մէկ հայր և մէկ մայր կուենան. սակայն դուք ուրիշ Աղգն ամբողջ և պատուական խնամակալութիւն մը որ բնական ծնօղէ աւելի կը սիրէ ու կը խնամէ զձեզ : Ջանացէք օգտիլ սոյն գեղեցիկ առիթէն և դառնալով ի հայրենիս ձեր ուսուցանել այլոց ինչ որ ուսաք հոս : Աղօթեցէք այս երկրին Վեհապետին, խնամակալութեան և բոլոր Աղգին համար :

Հանդէսը կնքուեցաւ Ն. Սրբազնութեան պահպանիչով որ շնորհաւորեց զՀոգաբարձութիւն Որբանոցի յառաջդիմութեան համար : Հոգաբարձու էֆէնտիք Ս. Պատրիարք Հօր աջն համբուրեցին, որ Հիւանդանոցի պարտեզը մտաւ և քիչ մը հանգստանալով մեկնեցաւ ի Պատրիարքարան :

Հիւանդանոցի Երեկի հասոյթն էր գրեթէ 10,000 շրշ. որոյ 6240 դահեկանը մայրաքաղաքս պանդխտող

Սերաստացի բարեսէր Աղգայիններէ հանգանակուած էր ձեռամբ Մարգարեան Ահարոն աղայի և այլոց, որք անձամբ բերին սոյն գումարը ի Հիւանդանոց եւ Ս. Պատրիարք Հօր օրհնութեան եւ Հոգաբարձութեան ջերմագին շնորհակալեաց արժանացան :

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը 10 օամ. ոսկի նուիրեց. յանուն Կիւպէնկեան Սերորէ եւ Մարգիս էֆէնտիներու ալ 10 օամ. ոսկի նուիրեցաւ :

ԱՂԳԱՅԻՆ

Չորեքշաբթի օրուան Հայրենիքի մէջ, իղմիրէն նամակ մը հրատարակուած էր՝ զԳոնդատ՝ կամ աւելի ճիշդը՝ Շահնուր ստորագրութեամբ որ հռչակաւոր շահպաղըեանը անբասիր ցուցընելու համար, բոլորովին բնական կը գտնէ մեր վեհափառ կաթողիկոսի դէմ եղած նախատինքները, և եթէ չեմք թալիւր, շահպաղըեանի այդ իայտառակ ընդացքը օրինաւոր և նուիրական իսկ կը դաւանի : (Եւ Հայրենիք կը հրատարակէ այդ նամակն) :

Նամակագիրը կըսէ թէ Մելիքսեդեկ այսօր աղգին առ երեւոյթ կաթողիկոսը չէ, նա կը գահակալէ մեր սրտին վրայ :

Ամեն անհատ իւր սիրածին համար կրնայ շատ տիտղոսներ շռայլել. ինչպէս որ իմ սիրածս ալ ինծի համար Սուրբ է, նուիրական է, և մերթ ընդ մերթ Աստուծոյ պէս բան մ'ալ է. բայց ինչպէս կարելի է բռնադատել ընդհանուր Աղգն որ իւր զգացածն զգայ նա և ինք. Մելիքսեդեկ՝ նամակագիրն համար Հայոց կաթողիկոս է եղեր. թող պաշտէ իւր՝ ինչպէս կըսէ, առ երեւոյթ կաթողիկոսը. բայց ընդհանուր Հայոց անունը բերանը չառնէ. զի Հայոց աղգը ունի իւր օրինաւոր կաթողիկոսն նախնեաց Ս. Աթուռն վրայ բազմած և աղգաց օրենքը չը ներեր նա :

խառել զայն յատենի Հայ եկեղեցւոյ. այդու ժպրհողը ապստամբ է աղգին դէմ, և վարչութեան պարտքն է զայն պատժել. իմի բան, աղգին տան մէջ կամ յարգանքը վարուելու է, և կամ երեւելու երթալու է :

Մելիքսեդեկի համար շահպաղըեանի ընթացքը օրինաւոր է եղեր. ընդհանուր աղգին համար խնդիրը կը տարբերի. շահպաղըեան ապստամբ մէ էջմիածնական Ս. Աթուռն դէմ և պէտք է որ պատժուի՝ ով որ ալ լինի նորա դեկնածուն, Մելիքսեդեկը կաթողիկոս դաւանողները պէտք է նոր աղգի մը սնունդ գտնեն իրենց, հայերը իւրեանց անունը ուրիշի փոխ չեն կրնար տալ :

Ինչ որ ալ ըլլայ Աղգային վարչութիւնը պարտի իւր գերիշխանութիւնը զգացնել ամեն հերձուածողներու դէմ :

Իզմիրի Ս. Առաջնորդը ինքզինքը Հայոց կաթողիկոս կը դաւանի եղեր և շահպաղըեանի (ընդ. Հայոց կաթողիկոսի դէմ ըրած անուր նախատինքները օրինաւոր կը համարի եղեր. Մելիքսեդեկ թող այդ հեշտ երազովը օրօրի, Աղգային վարչութիւնը պիտի չը թողու անպատիւ ընդհանուր Հայոց պատւոյն դէմ եղած այդ նախատինք. շահպաղըեան արտաքսուելու է Մաղնիսայէն և այս օրինակ գայթակչութեան կրկին տեղի չը տրուելու համար կարգադրուի պէտք է ըլլայ այդ վարդապետը. Հայոց Աղգը, երբեք չորս հերձուածողներ իրենց խաղալիկ չեն կրնար ընել վարչութիւնը երբեք չը պիտի վարանի անշուշտ իւր որոշումը դորձադրելէ, որուն անհամբեր կըսպասէ ամեն հայ :

ՉԵԿՈՒՑՈՒՄ

Պարոն Լ. Ն. ի կապդարարուի որ մինչեւ այժմ ստացած թեր-

Թերուն ստակը անյապաղ վճարէ թերթի մը բաժանորդագին վճարելու անկարող մէկը, պէտք չէ խմբագրին աղաչէ որ իրեն թերթ ղրկէ։ Երագիրը ստակով կը հրատարակուի ուստի մինչ այժմ ըստացած թերթերուն գինը և նախկին մէկ պարտքը միյաւորեց տպարան ղրկէ և եթէ բարեկամական խրատնուս կանայ, ուրիշ անգամ աւելի քաղաքավար կերպով թող վարուի։

ՊՐԱԶԻԼԻՈՅ

Մ Ե Ծ

Վիճակահանութիւնը որ ըստ ազդարարութեանց Արեւելի վարչութեան, տասն երեք օր առաջ պիտի քաշուեր և որ շահող (°) թիւերն հեռագրաւ պիտի հաղորդէին աստ և լրագրաց մէջ պիտի հրատարակուէր։ Վեց ամիս յետաձգուեր է, որ ըսել է երբէք տեղի չը պիտի ունենայ։

Ժողովուրդը ուրիշ անգամ այսպիսի դակարթներէ ղգուշացնելու համար բացատրենք թէ վեց ամիս յետաձգեն ինչ ըսել է։

Այդ վիճակահանութիւնն որ հիմէն, խարդախութեամբ սկըսուած էր՝ զի երբէք լսուած կամ տեսնուած չէ որ ժողովուրդէն 20 միլիօն հաւաքել և միայն 700 կէս միլիօն վճարելը պատուաւոր ձեռնարկութիւն մը համարուի, այդ վիճակահանութիւնն կըսեմք կարելի չէր որ իւր տոմսերը ամբողջ կարենար ծախել։ որ բնականաբար վիճակահանութիւն չը կըրգաւ կատարել։ Թէպէտ և 200 հազար տոմս հանած էր հրապարակի վրայ, սակայն այդ տոմսերը դիւրութեամբ վաճառելու համար մէկ տոմսը քսանի բաժնելով, դիւրագին ըրած էին, որով 200 հազար տոմսերն առ նուազն մէկ միլիօն բաժնի կը հասնի։

արդ այսօրինակ ձեռնարկ մը և ոչ մէկ տեղ ընդունելութիւն գտնելիքը չէր յուսացուէր ուստի Պօլսոյ սեղանաւորներն նամանաւագ վիճակահանութեանց գործեր ընող սեղանաւորաց և ոչ մին Պրազիլիոյ վիճակահանութեան մէկ տոմսն իւրեանց արկը չընդունեցին։ նմանապէս ուրիշ տեղեր ալ խարդախութիւնը հասկցուելով, յիշեալ վիճակահանութեան տոմսերուն գտակ տուող չը գտնուելուն, բնականաբար չը կարողացան վիճակահանութիւնը կատարել և վեց ամիս կը յետաձգեն յուսալով դեռ հրապարակ ուրիշ միամիտներ բայց ասով ժողովրդեան վստահութիւնը բոլորովին կը ցրուի և տնտեսագիտական հաշուով, Ռեզիլիոյ վիճակահանութիւնը կարելի չէ որ դուրս ելնէ։

Արդ այդ վիճակահանութեան տոմսերէն առնողներն իրաւունք ունին անմիջապէս ստակնին ետ պահանջել թէ իսդէռն էճէնսիի գործակալութեան և թէ Արեւելի վարչութեան, քանի որ յայտարարած են թէ—ստորագրութիւնը ընդ հուպ պիտի փակուի Մարտ 21 (ն. Տ.)— և թէ բոլոր տոմսերն ծախուած են—քանի որ բոլոր տոմսերը ծախուած են, ստակներն ինչ եղանակով որ իրաւունք ունի հաշիւ պահանջելու և ստակներնին ետ ուղելու։ Արեւելի վարչութիւնը դարձեալ կընայ ըսել արդեօք թէ ժողովրդեան ջարկ տալու բարի դիտաւորութեամբ ըրաւ այդ փլիչ յայտարարութիւններն, 25-ն կարմիր արդեօք երբ հետեւեալ հրատարակութիւննին կարդան—

Բոլոր տոմսերը ծախուած են։ Սմաէ մը ի վեր Մօնիթէօն տըրա Ծանս իւնիվէրսիթի (ընդհանուր աշխարհի բաղդին մոնետիկ) թղթակիցներն ալ տոմս չեն ստանար։ Սակայն կերելի թէ իսդէռն էճէնսի գործակալութիւնը, Բա-

րաքէօյ Տէյիւմէն խան, թիւ 9 գաւառներէն հետզհետէ կստանայ չվաճառուած տոմսերն և այսպէս կարելի է գտնել մնացեալ վերջին տոմսերն չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օր, որովհետեւ մնացեալ տոմսերն, եթէ երբէք կան, պիտի ղրկուին շաբաթ աւուր թղթատարով— Այս յայտարարութեան օր տեղն է որ պարզ ծանուցման մաղիւ չափ նմանութիւն ունենայ, Արեւելի վարչութիւնը, իսդէռն էճէնսիի հետ այս գործին մէջ ընկեր չէ, ինչ է։ Արդէն Պօլսոյ հասարակութիւնը սոյն օրինակ չահեկան խաղերու տեղեակ չըլալուն, միշտ կը խաբուի ուստի, ի դիմաց հանրութեան, վսեմ ընդ. Գատախագին ուշադրութիւնը կը հրաւիրենք, Պօլսոյ մէջ այս տեսակ ձեռնարկութեանց վրայ։

ԵՐԿՆԱՅԻՆ ՎԻՃԱԿ

Հինգշաբթի օրն արշալուստն, ինչպէս արդէն ծանուցած էինք յատուկ մափունան չքեղ զարդարուած Ոսկեղջուրի նաւամատոյցները հանդիպելով, ժամը մէկին հանդիսականները Գարաղաճ տարաւ։

Ուր կարմիր էհրամներ փռուած էին հանդիսականները նստելու և յատկապէս աթոռակներ շարուած էին գօրսէ հագնողներուն հանգստեանն համար։ Վիճակին կոնքը եռոտանի զարդարուն սեղանի մը վրայ դրուած էր. Հաճի Հոռոփի խաթունը հրաւիրեալները կոնքին քովը բոլորեց և սկսաւ վիճակը։

—Ծօ Ակոբճան, էկոյ եւս վրում սա իսկէմրիին վրայ ել տէ. լէհէնին մէջէն մէկիկ, մէկիկ վիճակները պիտի հանէս։

—Մարդրիտ տուտու տուվան ըսէ օր մաղմատները պէիթ ղուրցել պաշլային։

Մարգարիտ տուտուն հետեւեալ
աղօթքն սկսաւ :

Օխտը լեռին էլ վան ծաղիկը,
Սուրբ Ստեփաննոսին օխտը
քարիկը

Վրճակս չճակ ըլլայ

Տուն տեղէ պարին չելլայ

Ախճիկներ ժողովեցէք,

Սաղուեցէք զարգարուեցէք

Եւտի Սուրբարըն ահտընա

Թալէհսիզ գրգլար բահտընա

Հանէ աղջիկս հանէ

Եւ ողորմեա ամէն :

—Հրամմէ Հոռոփ խաթուն,
տուն պաշայէ օր ամենն ալ սը-
րայով ըսեն :

Օրթա գեղին արեւը

Նազով կուտայ բարեւը

Պարէ կոչկու չունենայ

Կնտակ կըլխուն վերեւը :

—Հանէ Ակորճան

—Պրաղիկայի բիւնքօն ելաւ :

—Գա նայէ ընտօր ալ ուլմիշ է-
ղաւ . . հայտէ մատամա ֆիլոմէն
պիր պէյիթնալ տուն ըսէ :

—Էյի ամա պէն էրմէնիճէ պիլ-
մէմ :

—Նէ զարարը վար թիւրքճէ
օլտուն տահա էյի :

Եալանլար ուլտուրուրլար

Սիւթիւնլէր տուտուրուրլար

Բուպաճըլար էօնիւնտէ

Սըրա սըրա տուրուրլար

—Հանէ Ակորճան :

—Ձըխըն մը հալկիթ ելաւ :

—Էյ բէք կիւլէճէք շէյ, գա
ճանըմ սանըրսըն բի թաք պաշ-
լարընա վուրտու :

—Սէրէնա հայտէ պիր պէյիթ
տէ սէն սէօյլէ :

Սադալը վար բէչիմին

Պիր թուրթամ օթ կէչիմին

Գալպինէ կիւճ կիթմէսին

Բէք խըմպըլ տըր պիչիմին :

—Հանէ Ակորճան :

—Գա տուտու ճընկըրտախը
թասմա մը ելաւ :

—Իշտէ թամամ, քէչօյիդ կը-
լօխն անցու տէ պտըտցուր :

—Ընդնտիկ հանըմ սէնտէ պիր
պէյիթ սէօյլէսէն :

Ինէյլէ գուլու էշէր :

Ճանսըզ պիր ճընսը պէշէր

Գուրումուշ եաբաք կիպի

Բիւղկեար էօնիւնէ տիւշէր :

—Հանէ Ակորճան :

—Գա տուտու զագէթայի կտոր
մը ելաւ :

—Աճապա ո՞ր խաղէթան է :

—Վէրին պէն օգուեայլըմ, գա
պու նէ տէ անճանաջ եաղը . . հա՛ւ,
է, նիք . . .

—Վուլ կը ճաշնամ մեր մա-
հալէն կը նստեր բէք աղատան
մարդ է :

—Գա շու պիր գիկնաթու վա-
րըտըլաւ օ օլմասըն պիր վագըթ
փուլ ինէսի ֆիլոմէն իլէ ամուռ
էտէր իտի :

—Եաղմուռ էտէ՞ր նէ տիր, վայ
մեղքիս, արթըխ անծրեւ պէրեւ
ալ պաշայեցին :

—Եաղմուր տէյիլ Բլաբ հանըմ,
ամուռ, սանքի մուհապէթ է-
տէրէր իտի :

—Այիդ խաղայ ախճիկ, իշտի
բիշտի չըսես օր հասկընամ . եօք
օ էօյլէ շէյ պիլմէզ շէնքով շնոր-
քով ատամ տըր :

—Էյ գա հայտէյին, լագըր-
տըյա տալտըք վիճակըմըզ իւերի
կիթմէյօր :

—Մատմաղէլ Անիկ սէն տա-
հա պէյիթ սէօյլէմէտին . ամա
կիւլէճէք պիր շէյ սէօյլէ :

Քէվրան կէշէր օլուր իզ

Ախ, օֆ, փիւֆ, էսէֆէնկիզ

Ֆէյլէսօֆլար իչինտէ

Տիօթէն իլէ տէնկ իզ

—Հանէ Ակորճան :

—Աղէկ ա մարիկ, ես հիմա
ասոր ինչ հանեմ :

—Մեղայ տէր մեղայ . . կոնքին
մէշէն կէլիշի կիւզէլ պան մը
հանէ :

—Պատկեր մը ելաւ :

—Գա աճապ գիմին բօթթէսի
տիր վարդապետէ պէնդէյօր :

—Ինծի անցուցէք տա պատ-
կերը, կեցիր նայիմ . . ճաշայ:
Ծահաղլըբան վարդապետէ,
եանի տեանս նէ կայ եա ար-

պէտա կը հանեն պօղազ պօղազի
կուգան :

—Լուցիկ հայտէ, սըրա սէնին
տիր :

Գուրումագսուզ պիր գուշում
վար

Ձըդաճագ եօգուշում վար

Տիւնեալար ալթ իւստ օլսա

Էտալը տուրուշում վար :

—Հանէ Ակորճան :

—Օսկի չէմպէր կէօղլիւք մը
ելաւ ճէրիտէի պլուած տմա,
ճամը կոտորեր է :

—Գա վո՛ւլ տէրը զագէթաճիլէ
հիմա տուք էք կոտորեր տէյի ել-
լա մեզ պիտի կրէ :

—Պօշ եէրէ եիւրէյինի օյնաթ-
մա Հոռոփ տուտու գաղայլա
չօճուգ իւսաիւնէ պաստը գը-
րըտը տէրիզ :

—Վուլ սաղ օլասըն մատամա
Ձիչիլ, եանի եիւրէյիմ բէք օյնա-
տը :

—Գա ճանըմ գագէթաճըլար-
տան պաշկա ատամ իւստիւնէ
պէյիթ սէօյլէճմէյէճէք :

—Գա մեղայ ես ալ մէկ հատ մը
ըսեմ տէ հապա :

—Կէրչէք Ղամպիկ հանըմ տա-
հա պէյիթ սէօյլէմէտի, պիր թա-
նէ տէ օ սէօյլէսին :

Շարաթը հեղ մը կելայ

Գօգօնա ֆնջինելայ

Կէօղլիւքնար քիթէն չիյնար

Ատ մարդուն, մեռաքն ելայ

—Հանէ Ակորճան

—Ձեյլար կոր գա տուտու

—Ծօ ինչո՞ւ չեյլար կոր

—Քիթին գամուած է կէօզ-
լիւկը :

—Մեղայ դայէր գիշերն ալ ա-
տով կը պառկի :

—Աման տուն ալ հիմայ թող
որ աղջիկները վրճակ ըսեն, հայ-
տէ Անիկ եալրում, աղուր պան
մը ըսէ :

Եիւրէյիմի աչարլար

Իչինէ նար սաչարլար

Պունէ գէօր թալէհիմ վար

Գըղլար պէնտէն գաչարլար :

—Հանէ Ակորճան:

—Պզտիկ բարայի չանթա մը ելաւ:

—Տէրտի կրէկուաւուն բօրթ-մօնէսի տիր:

—Պագալըմ իշինտէ բարա վար:

—Սաղըղընտա, թէօվպէ էթմիշ տիր բօրթմօնէսին իշինտէ բարա սաքլամաղա:

—Սըրա Սէրէնանըն տըր:

Գիւշիւքտէն տիւշտիւմ տէրտէ Պիւմէմ սէվտիղիմ նէրտէ

կիտէր էլէ երաշըր

Պէօյլէ իքիտէ պիրտէ

—Հանէ Ակորճան

—Բէրուզէ մատնի մը ելաւ:

—Սաֆտէրուն Ուսկուկուն տըր:

—Գա վախ Ուսկուկ, իքիտէ պիրտէ պաշկասընը սէվէյօր վէն-սանըն տա պիզէ սէօյլէմէղսին հէ:

—Մայթապ իտէմէզ մատմա-զէլ, վիճակ տըր պու գայէր հէր սէօյլէնէն տօղրու չըքաճաք:

—Աման Ուսկուկ պիր լագըր-տը տըր էթտի, էյլէնէճէյիզ նէ՝ օլուր:

—Կէցէք ախճիկներ հատ մըն ալ ես ըսեմ, մեղայ առա չեն թողուր որ պերան պանաս:

—Գըղար պրաքըն Ուսաննա տուտու տա սէօյլէսին:

Կըճըր կըճըր կիլինմիշ

Բէք քէնտինէ պէյլէնմիշ

Եիւրէյի գըրըք պու կիւն

Աճապ գիւմէ կիւճէնմիշ

—Հանէ Ժօ Ակորճան

—Պզտիկ չախը մը ելաւ:

—Ճըրճըր վէրթինին տիր. գա նէ տօղրու չըգտը, միւսիւպէթ Բասգալըն էթտիղինէ քիմ օլսա կիւճէնմէզ:

—Գա նէ՝ օլտու քի:

—Նշանընը կէրի էթտի պիւ-մէզսին:

—Էրկու աչկը գէօրնա պիւէ քիմ, կիւզէլիմ ախճըկանը կրիւր կրակի էրեր է. սէն հոգ էթմէ գըզ, նշանը գըթըղը օլտուն, է-լիմի սաղասամ էլլիսի, պաշըմը սաղասամ պաշը թէլլիսի:

—Նշանը կէրի էթտիղի կիւ-ճիւմէ կիթմէզ հաճի հանըմ, օ տիղլէրիմէ գաբանըպ տա վէրթի-նիմ, սէն պէնի մութլու էտէ-ճէքսին տէր, կէօզ եաշը տէօքէր իտի տէ մէյէր եալան ըմըզ հէփ:

—Գա ճանըմ եալան եէրտէ նասըլ տա աղլարլար:

—Կէօրիւմճէմ բէք ուստասը տըր, նէ հատտինէ քի գօճասը պիր լագըրտը էթսին, եաշը պուրնունուն ուճունտա տըր:

—Վուլ հերիք խորադ-ե՝ք, վը-ճակը լրմնցունենք օր լօխմամը պան ուտուի:

—Տուրուն գըղար պիր պէյիթ կէլտի հաթըմա

Արարըմ պուճաք պուճաք

Պանա եար քիմ օլաճաք

Գօրքարըմ սօն սօնունտա

Էյ վա՛հ պուլունմայաճաք

—Հանէ Ակորճան:

—Օղի մը թէք ելաւ:

—Էտալը Գաթինին տիր:

—Խենդ գըզ պու քատար ու-մուտունու քէսմէ էլպէթտէ սա-նա տա պիրի պուլունուր:

—Պէնիմ միւհթաճըղըմ եօք տըր, սէն քէնտինի տիւշին մատ-մաղէլ. հէմ օ գիւրէ թէքի պէ-նիմ տէյիլ տիր:

—Օ պիր թէքի գուլաղընտա տուրուեօր տահա:

—Պիր տէքի պէնիմ օլմուշ, պա-նա էնսիւլթ էթմէեէ պիր հագ-կընըզ եօք տուր գանն էտէրսէմ:

—Ճանըմ չիմտի շագա պիր լա-գըրտը տըր էթտիք, պու գա-տար աֆրօնթ իսթէմէզ մատմա-զէլ:

—Էյ ճանըմ ուղուն էթտինիզ, պիթիլին քի միւսիւ Ծաղիկ պիր պէյիթ սէօյլէնէէք:

—Բէճա իտէրիմ մատմաղէլ պէն պէյիթ պիլմէմ:

—Եօք, եօք, հէփիմիզ տէ րէ-ճա իտէրիզ պիր պէյիթ սէօյլէ-յէճէքսին:

—Էօյլէ օլտուղու հալտէ պաշ իւսթիւնէ ֆագաթ էսկիտէն պիր

պէյիթ գալմըշ տըր հաթըմտա օ տա հէմ էրմէնիճէ տիր հէմ պիւ-մէճէ գըրըգը պիր շէյ տիր:

—Զարարը եօք նէ օլուրսա օլ-սուն:

Ճիտտաներու հայելի

Խաւար կուղէ որ փայլի

Կէսը կայծ կէսն նստոտեղ

Մարդ ըլլալն երկբայելի

—Հանէ Ակորճան:

Հաւանին կսթը ելաւ:

Հաճի հանըմ, պուռու չիմտի պիր թիւլէ սարըպ Պէօյիւք տէ-րէյէ կէօնտէրմէյիլիզ, ուստունու պու տուր, նէ տէրսին մամզէլ ֆիլօ:

—Պէնիմ տէ զիւլիւմիւմ պու տուր:

Վերջապէս ընդհանուր հաւա-նութեամբ Հալանին կոթը շղարշի մը մէջ դրուելով Պէօյիւք տէրէ երիտասարդ տիրոջը զրկուեցաւ, յետոյ սեղան նստան կոչնականք ուր մէկ ժամէ աւելի տեւեց սե-ղանը յետոյ երգեցին պարեցին և յերեկոյն գարձեալ յատուկ մա-վունայով, ամեն մարդ իւր տեղը վերադարձաւ:

ԱՂՋԻԿՏԵՍԻ

ՆՈՐ ՏԵՍՈՒԿԸ

Թէպէտ և աղջիկտեսի նոր տե-սակը ըսինք, սակայն բաղմաց համար նոր բան մը չէ մեր նկա-րագրելիքը:

Անցեալ չորեքշաբթի առաւօ-տուն կանուխ խըլափուզ հաճի Մարթա խաթունը, ճերմակ լա-չակը գլուխը կէտիք բաշա տուն մը գնաց:

Տան տիկինը գեռ նոր ելած անկողնէն, վառարանը առջեւն առած մինչդեռ սուրճին ջուրը կը տաքցնէր, տանը դուռը դար-նուեցաւ, տան տիկինը ձեռքն երկնցունելով բակը նայող պա-տուհանին քովէն դրան չուանը քաշեց ու դուռը բացուելով հա-ճի Մարթա խաթունը ներս մը-

տաւ, տան տիկինը աճապարեց սանդուղին գլուխէն զայն դիմաւորել:

— Բարի եկար Հաճի խաթուն խեր է իշալահ:

— Խեղճ ականիկ, պարիւռս, օ՜հ... հոգնեցայ նէ՞...:

— Գլխու թիւպէնտըտ հուսաբարմախին վրայ դիր... սանկ քէօյէն անցիր Հաճի խաթուն:

— Թա՛խ Եթեմէզէն պիր պաշ սօրուխ ալմամաճասընա գալեր եմ, ալ տէրման չըմնաց վրաս:

— Կեցիր խախվէ մը եփեմ, ես ալ նոր ելայ տէ մանղալին կրակը մարեր էր, նորէն կրակ տրի... էյ ինչ կայ ինչ չիկայ նայինք:

— Լսեցիր, Բուբուզ հանըմին ականիկն ալ տեղաւորեցինք...:

— Գա որի՞...:

— Քէօսէլէյի թիւճճարի մը, տունը տեղը շնորքով պանը կործը տեղը...:

— Գուզում Հաճի խաթուն, սա Աղաւնիճայիս կործը ընտոր եղաւ:

— Իշտէ անոր համար եկայ, խախվէս խըմեմ օր կլոխս տեղը գայ:

— Վուլ նալէթ ըլլայ, լախըրտըյի տալմիշ եղայ խախվէն թաշմիշ եղաւ:

— Չարար չունի՞... գիւլ խախվէսին էօզլիլ կըլլայ:

— Ընտոր ըրիր մարդուն հետ տեսնուեցար:

— Էյ Անպէր հանըմ, կործը պէրան պէրնի եկած է մարդը տասը քէսէյէն փուլ մը պակաս չեմ առներ կրսէ կոր, քսան քէսէով ալ ականիկ տուերէն ամա ինք չէ հաւներ, անանկ բարայի աչկ ունեցող մարդ չէ, ինծի կը հարցունես նէ էկոյ աս խըսմէթը մի փախցուներ:

— Հաճի խաթուն ութը քէսէն տուողը, տասն ալ կուտայ, տամ ամա ելլայ կէշ մէկը ըլլայ նէ եանի տունս կը բերբի:

— Ատ թարափէն հի՛շ ֆէսֆէսէ մընէր, նէ էթրաֆ ունի նէ

պան, խելըը միակը կործին է կիրակի օրերը պիլէ խանութ կը պանա:

— Ինչ գործ կընէ:

— Ախտէրիյէի մալ կը ծախէ ամա, անանկ մահալլէյի ախտէր չէ. բէք մէնխալէյէ. խանութը ֆըստըլի պէս լեցուն է, հիմալ կըսէ կոր քի տասը քէսէ տալու խալիլութին տայնէ ականիկը կը տեսնամ, նշանը կուտամ. Առջի պսակին ալ հարսնիքը կընենք կը լմնայ:

— Տասը քէսէին հայտէ բէք աղէկ ըսեմ, տնփեսայ պիտի կայ:

— Միսմինաւորիկ է ինչ նաֆիլէ գիրա տամ զատ տուն տեղ ըլլամ կըսէ կոր, էյ սանքիքեղի ալ ֆայտալը կըլլայ տունիդ մէջ էրիկ մարդ չունիս հէմ ականիկ տայիմա խօլթուլիդ տակը կըլլայ. տուն իմ խօսքիս նայէ էկոյ աս պանին չէ մըտեր:

— Ինչ կիտնամ Հաճի խաթուն, ալ տուն կիտէս Աղաւնիճաս ծառքըդ մեծցաւ, ընտոր սր կուղէս անանկ ըրէ, Ալլահտան խալըլըսը:

— Վուլ, արեւուն կոտորիմ, Աստուած չընէ օր չը կիտցած մարդուս անանկ չըխարընա կործ ընեմ. հիմայ Օսկան աղան ըսաւ օր՝ փեսացուիդ անունն է. վաղը Ամենափրկիչին օրն է վաղը թող խալաթիա Ամենա փրկիչ երթան ես ալ հոն կուգամ ականիկը կը տեսնամ, հաւնիմնէ առջի պըսակին հարսնիքը կը լմնայ:

— Վուլ, ատ բէք աղէկ մտմտացեր է, ես ալ կը մտմտայի կոր քի միսմինաւորիկ ելլայ աղջիկ տես կայ նէ, տուռ տրացները ինչ կըսէն:

— Գա պմենական պանին եօլը սրան կիտէ, բէք խելանի մարդ է:

— Ուլ օղջ ըլլաս Հաճի խաթուն, սահաթը բանին պիտի կայ ըսիր:

— Սահաթը չըսաւ թամ կէս օրին հոն պիտի կըտնուի:

— Կեցիր նայինք, օրը տասվերկու սահաթ չէ՞...:

— Ես կիտե՛մ օրթտի:

— Հապա, օրը տասվերկու սահաթ է, տասվերկու քին կէսը... վեց կընէ, ըսելէ քի վեցին պիտի կայ ես չորսին Աղաւնիճաս կուռնեմ կերթամ սահաթը հինկին հոն եմ:

Այս միջոցին օրիորդ Աղաւնիճա խուզէն ներս մտնալով, ուղղակի գնաց հաճի Մարթա խաթունին ձեռքը պաքաւ:

— Ապրիս եալրում, ընտոր ալ պոյ նետեր է պօյը սիրեմ... էյ, իշտէ անանկ, վաղը Հինկին ես ալ պիտի կամ շատոնց է քի Ամենա փրկիչ ուխտ ըրեր էի:

— Կերթա՛ս կոր հաճի խաթուն տահա վախիթը կանուխ էր:

— Չէ եալրուս տահա հինգ վեց տեղ ունիմ երթալիք, ինչ ընեմ քուրուկ ամենուն ալ հասնելու է մնաք պարով:

— Երթաս բարով ալ վաղը Ամենա փրկիչ կը տեսնուինք:

Առտուն հոս կուգամ պարապար կերթանք ըսելով Հաճի խաթունը մեկնեցաւ:

(Ծարձակեւէ)

ԳԼԹՐԻԶՄ

Այիստէֆանօ շմէնտըֆէրի վափօնունտա էվէլի կիւն պիր միւսիւ իլէ պիր մատամ, գէօյլէրին կիւզէրիկի իւզէրինէ իկէօրիւշմէքտէ իտիլէր:

— Եու կիւզէլ էվի կէօրիւեօրսունուղ մատամ, գէնկին պիր աշճընըն տըր:

— Աշճըլըգտա՞ն մը գազանմըշ:

— Էվէթ մատամ:

— Չօք շաշլուճագ չէյ, պէն սանըրըտըմ քի եալընը պօրսաւ. լարտա գազլարը եօլարաք դէնկին օլուրլար. մութվագլարտա տա օլուրուճուշ:

Տէլիգանլընն պիրի ալթը այս տան պէրի էվինէ կիթմէմիշ օլտուղու տալըսընա կիտէր վէ գէնկին էհթիյարը գուճագլարապ, սըշրայըպ օյնամաղա պաշլարի:

—Նէ օ քիւչիւք ետրամագ սէ-
նի զայնթ սէվինճլի կէօրիւեօ-
րում :

—Ախ սէվիւիւ տայըճըղմ,
ալթը ալտան պերի զայնթ կիւ-
զէլ պիր դըղ իլէ մուհապէթ է-
տէյօրտոււմ, շիմտի անասը ըազը
օլտու պիր ալտան էվէնէճէյիմ :

—Թապի տիր . քէչի ետվրու-
լարը տախի պուլնուղլարընըն չըբ-
տըղընը հիսս էթտիքէրինտէ սէ-
նին կիպի պէօլէ սըչալըպ օյ-
նարլար :

Տու գարընըն պիրի եէնի էօլ-
միւշ դօճասընըն իւստիւնէ աղ-
լատըղընտա հէր թանըտըղլարը-
նա տէր իտի :

—Ախ . . պանա հէր վագըթ
րահմէթլիտէր իտի քի— ճէհէն-
նէմէ կիտէսին ինչալահ— հէյ
վահ, պէնտէն իլէրի քէնտի կիթ-
տի, սէվիւիւ գօճաճըղմ :

—Բէրուզիկ տուտու պու սէ-
նէ քէօյէ չըճմայաճաքսընըղ :

—Չըբըլաճաք ամա տահա հիչ
պիր գէօյէ գարար վէրէմէտիք :

—Կէնէ հէփսինտէն էյի Պէօ-
յիւք տէրէ տիր :

—Պէնտէ տէտիմ իսէ Բուզիկ
աղա տէյօր քի բէք ուղաք տըր,
սապահ աղչամ կիտիպ կէլմէք ի-
չին կիւճիւք չէքիլիօր :

—Եէնի քէօյ ֆէնա տէյիլ,
պիր աղ թէնհալըղ վար ամա նէ
գատար օլսա Պէօյիւք տէրէ գա-
տար Ըսթամպօլտան ուղաք տէ-
յիլ :

—Սէօյլէտիմ, Բուզիկ աղա
եէնի քէօյտէն հազ էթմէյօր :

—Գատը դէօյիւ բէք մինասիպ
տիր սիդէ հէմ եօլու եաքըն հէմ
քիւթիւն գօմիլֆօ ֆամիլեալար
օթուրուր :

—Պէնտէ օրայը չօք իստէտիմ
ամա, Բուզիկ աղա տէյօր քի լօ-
տօս կիւնլէրի վաքօր իչլէմէզ, թա
իւսկիւտարտան կիտիպ կէլմէի :

—Սիզին եէրինիզտէ օլսամ, պու
սէնէտէ Պէօյիւք պտայա կիտէ-
րիմ :

—Ախ . . օ տէտիլին էյի շէյ
ամա, Բուզիկ աղա տէյօր քի օ-
րասը բէք բահալը օլուր, պիզիմ
իչին տէյիլ :

—Սանա պիր շէյ սէօյլէյիմ
Բէրուզիկ տուտու . Բուզիկ աղա
իչին էն ուճուղու . պու սէնէ էվ-
տէ օթուրմաք տըր զանն էտէրիմ :

Վ Ե Պ

Հ Ա Յ Ե Լ Ի Ն ԺԳ.

Մինչ այսպէս կը չըջէր, տեսաւ
մանուշակագոյն զգեստներ հագած
կին մը, որ գերեզմանի մը վրայ ըն-
կողմանած և դէմքը վար կախած էր
Թիրանգոյն շալն մէկ կողման սա-
հած էր և աղամանդեայ մանեակով
դարդարուն վզին ձիւնային սպիտա-
կութիւնը վերջաւոսոյ ճառագայթիւք
վարդագոյն կը վայլէր : Յլամինկօ
յանկարծ մտաբերեց թէ այդ կին
հարկերորդն ըլլալու էր : Ուղեց
փախչիլ, բայց նոյն վայրկենին այդ
բարձր մարմին ոտք ելաւ և վար թո-
ղուց մոխրագոյն քող մը . դիցուհւոյ
նման ջընաղ կին մ'էր, որ արտաս-
ուելէն կարմրեցած ահարկու աչերով
առ ինքն նայեցաւ : Մինչև և իսկ «նե-
րեցէք» բառն արտասանելու վրայ էր
երբ Յլամինկօ անոր վրայ յարձակե-
լով սեղմեց զնա և իւր չղաչոյնը նո-
րայ կուճըին վրայ դնելով դռնեց.—
«Մի խօսիր . թշուառական . ապա
թէ ոչ կորսուած ես . . . » :

Կինը մարելով գերեզմանին վրայ
ինկաւ : Յլամինկօ նորա առջեւ կե-
ցաւ դողդոջուն և մեռելադէմ, և
մերկ չղաչոյնն ի ձեռին՝ որ կը շո-
ղար մարը մտնող արեւուն ճառա-
գայթիւք : Յլամինկօ, որ իւր աչերն
յառած էր այդ տկար էակին վրայ,
ճանչցաւ իւր սխալումն : Նոյն պա-
հուն մտաց այնպիսի շփոթութիւն
մ'ունեցած էր, որ յոյժ տգեղ դէմք
մը, դիցուհւոյ գեղեցիկութեամբ չըբ-
նաղադոյն դէմք երեւցած էր իրեն :

Յլամինկօ տեսնելով զմեռելաթա-
ղըն, որ գերեզմաններուն մէջէն
դէպ առ ինքն կուգար ինքն ալ դէպ
առ նա վազեց, ձեռքէն առաւ հա-
յելին և երեք ոսկի նետելով նորա
գլխարկին մէջ, մեկնեցաւ գերեզ-
մանատունէն :

ԺԳ.

Ա' Յլամինկօ կը փնտռէր խաղու
և շուայտութեան ընկերութիւններ
յորս կարենար զօսնուլ և մոռնալ

Իւր հոգին : Մինչ այսպէս գիշեր
ու ցորեկ անկարգ ու անկանոն կ'ան-
ցունէր իւր ժամանակն, վերջապէս
յուսոյ աստղ մը ծագեցաւ :

Հայելոյն մէջ տեսնուած դէմքե-
րէն օրիորդ մը սիրեց զինքն :

Աղջիկն ստէպ նորա արտամութիւնը
տեսնելով պատճառը կը հարցունէր :

Յլամինկօ ամեն բան պատմեց նմա :

—Ես քեզ պիտի աղատեմ, ըսաւ
աղջիկը :

Յլամինկօ գրկեց զնա և ջերմ համ-
բոյրներէ ետք, ըսաւ :

—Այդ քաջութիւն սէրը միայն կըր-
նայ ունենալ :

Գիշերը լուսաւորեալ էր լրացեալ
լուսնոյ լուսով : Աղջիկը վերարկուին
տակ պահելով հայելին և փորելու
համար պէտք եղած գործիքներն,
գերեզմանատան ճանքան բռնեց :

Յլամինկօ ցուցուց նմա գերեզմանն
և ինքն ետ դառնաւ տունը մօտ ըս-
պասելու : Իւր կենաց նշանաւորա-
գոյն ժամն էր այս : Սրտին մէջ կար
այնպիսի զգացումն որ չնմանիր իսկ
այն զգացման երբ բռնակալ մը սեւ
ու ձերմակ գնտակներով լեցուն,
ծածկուած աման մը քեզ ներկայա-
ցունելով կ'ըսէ . . հանէ մէջէն մէկ
հատ . եթէ ձերմակ լինի, պիտի ապ-
րիս . եթէ սեւ՝ պիտի մեռնիս :

Կէս գիշերը կէս ժամ անցած էր,
երբ աղջիկը վերադարձաւ . դիակի մը
պէս դեղնած էր :

—Առ, ըսաւ ձեռքը երկնցունելով,
և բան մը տուաւ Յլամինկօյի : Յլա-
մինկօ դողաց, հայելին էր առածը :

—Ի՞նչ թոթովեց, դարձեալ չթաղ-
ուեցաւ հայելին :

Աղջիկը թուէր թէ չէր լսեր նորա
ըսածը, այլ դէպ ի գերեզմանատան
կողմն դառնալով անշարժ կեցաւ,
ձեռքը ճակտին տարաւ, շուրթները
կը շարժէին, և այնպէս կը թուէր
թէ ցած ձայնով կը խօսէր վայրակի
լուսով լուսաւորեալ ողուց հետ : Ի-
րեն այնպէս թուած էր թէ օտար
աշխարհէ մը կուգար . և թէ լուս-
նի լուսով ձերմկեցած տանց մօտ
չէր, թէ իւր սիրահարն իւր մօտ չէր
գտնուեր :

—Խօսէ, գոչեց Յլամինկօ, որ ըս-
կօած էր չարագուշակ կանխագղա-
ցումներ ունենալ :

(Շարունակելի)

ՔԻՒՉԻՒՔԵԱՆ ՊԻՐԱՏԵՐԼԵՐ

Տ Է Պ Պ Օ

26 Սրահայօղստ, Եհնի Ճառիստ 26

ՍԲԷՉԱՐ ՏԻՒՔԵԱՆԼԱՐԸ

ՍԹԱՆՊՕԼ ՔԵՕՔՐԻԼ քարչըսընտա — 77

ՊԵՅՕՂԼՈՒՆՏԱ Տօղրու Եօլտա — 167

Մէզքիւր Էճղախանէ վէ սրէչար տիւքքեանլարընտա միւ թէատտիտ վէ Էնվաի թէրքիպաթը քիմեէվիյէ վէ Էճղա վէ մուււ- լէճաթ վէ ալաթը ճէրրահիյէ, վէ ալէա ճինս լասթիգ իլէ չէլիք- տէն մաամուլ ալաթ ու Էտէվաթ, վէ Լիսթէր ուսուլինտէ պաղ- լար, վէ Ֆրանսըղ վէ ինկիլիզ Էճղալարը, սօլֆաթօնըն Էն ալէս ճինսի, Էէրի վէ Էճնէպի մատէն սուլարը, ֆօթօկրաֆճըլար ի- իչիւն թէրքիպաթը քիմեէվիյէ, Պօրտօ շարապլարը, գօնեաղլար Էնվաի իչիլիէր, գօգուլու սապօնլար, նէֆիս բուտրա, օ տը Գօ- լօնեը, սաչ սուլարը, տիւղկիւնլիւքլէր, վէ սրէչարլար իլէ քիմ- Էտիտանէլէրէ մախսուս ճամ գապլար վէ ալաթ ու Էտէվաթ մէվ- ճուտ օլուպ, թօքտան վէ բէրպէնտէ ֆիրուլիթ օլուներ :

Քէզալիք մէզքիւր տիւքքեանլարտա մուլայէնէլի թըպպիյէ տա խի իճրա օլուներ, պուլնա մախսուս օտալարը վար տըր :

Պէյօղլու Էճղախանէսի կէճէլէրի աչըգ տըր :

Չէյլ—Պիլճիւմէ Էճղա վէ Էմթաամըղըն Էն ալէա ճինստէն օլ- տըղընը վէ բէք Էճվէն ֆիյաթլա սաթըլարըղըն Տօգթօր Էֆէն- տիլէրէ վէ րաղպէթլու Էճալիյէ իլան ու պէյան իտէրիզ :

ԲՕԼ ՖՕՅԱՃԵԱՆ

ԵԻՒՔՍԷՔ ԳԱԼՏԸՐԸՄՏԱ ՅՕ ՆՈՒՄԷՐՕՏԱ

ԿԵՕՁԷ ՎԷ ՃԷՐՐԱՀԼԸՂԱ ՄԻԻԹԷԱԼԻԻ

Ա Լ Է Ա Թ Թ Ի Ի Ճ Ճ Ա Ր Ը

Մէզքիւր մաղաղատա կէօղէ վէ ճէրրահլըղա միւթէալիգ Էնվայի ալէաթ ու Էտէվաթ մէվճուտ տըր :

Էգճիւնիէ, Էուսուլաղ վէ սէրթ լասթիգտէն (գաուչուտան) մաամուլ մէվատտը միւլաթէլիֆէ, գասըգ պաղլարը, Էնվաի չիլինկալար, Էլէք- թրիք մաքինալարը, միզան իւլ հալա (պարօմէթր), միզան իւլ հարարէ (թէրմօմէթր) վէ Էյի ճինս կէօղլիւքլէր պուլնմաղտա տըր :

Մ. Բօլ Ֆօյաճեան՝ հէր նէվ սըբարըլաթ վէ թամիրաթը Էճվէն ֆիյաթ իլէ իճրա վէ տէրէօհտէ իտէր :

ԷԹՄԷՔՃԻ ԽԱԹՈՒՆ

Քսապիէ տը Մօնթէքէնին սահարը մէհուրէսինտէն Էթմէքճի Խաթուն նամ րօմանըն պէչինճի ճիլտի տալաի թապ ու նէչր օլուներչ տըր վէ ալ- թընճը սօն ճիլտի տալաի Էազընտա նէչր օլունաճաղ տըր :

Պու Էօլտա րօմանլար պիր առամա տօսթտան զիյատէ միւֆիս տիրէր. Էիրա չիմտիքի տօսթլար՝ մալիւմա չօք տէֆա գարարը մուճիպ օլուլար. պիլաղս պու Էօլտա րօմանլարտան պիր առամ բէք չօք չէյլէր Էյրէնիպ իսթիֆատէ իտլր :

Սաթըլըր հէր քիթապճը տէքեան- լարընտա, Պահճէ գարուտա սուճու Պօղոս վէ Յակոբ աղալարըն տիւ- քեանլարընտա :

Ֆիյ 15 զուրուչ :

Դ Պ Ր Ո Ց

ԱՆԲՂԻԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

ՇՐՁԱՆ Ա.

ԱՌԱԿԲ, ԱՌԱԾԲ, ՆԱՄԱԿԲ

ՄԱՆՐԱՎԷՊԲ, ՈՏԱՆԱԽՈՐԲ, ԵԻՅԼԷ

Մանօթուլիւքլէր ի վերայ հընչման իւրաքանչիւր նշանադրի :

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԲ ԲԱՌԻՑ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

Ս. Մ. ԳԱՍԱՊԵԱՆ

Կեդրոնատեղին է Վ. Հիսարեան գրատունը Ուզուն չօրլի-պաշը թիւ 10 :

Գին 2 ուկէս դահեկան

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՑԵՏՈՄՍԻ

Լաւագոյն քառթօնի վըայ ամէն լեզուաւ կը պատրաստուի իգին 100 հատը 10 դահկն. պէտք ունեցողները պէտք է դիմեն Գ. Պաղտատլեան տպարան Յակոբեան խան թիւ 13 Կ. Պոլիս :

ՏԷՐ ԵԻ ՏՆՕՐԷՆ

ԱՆՏՕՆ ՍԱՔԱԵԱՆ

ԽՄԱՊԳԻՐ Յ. ՀԱՃԵԱՆ